

զի տարրեր բաներ ըլլալու բաւական նշաններ կան, — ինչպէս ըսինք և պիտի տեսնենք ի հետեւեալն: Սակայն մենք Պրոկղի բնագրի պարզ թարգմանութեան ծանօթ խնդրէն աւելի այս դեռ անծանօթ իրաց կնճրոստ խնդրոյն աւագ կարեւորութիւն կ'ուզենք տալ: Ուստի Մատենադարանիս թ. 1123 Զեռագրի պարունակութիւնը ծանօթացնելէն վերջ մեր ուսումնասէր ընթերցողաց, բնականապէս հետեւեալ հարցերու վրայ կը հրաւիրենք մեր և այլոց ուշադրութիւնը. Ա. Ո՞ր էր Ուիլիսոսն այն, և ի՞նչ լեզուով գրեց Պրոկղի Դիսպոթոսի Աստուածաբանական շաղկապնց

կապնց Լուծմունքը: Բ. Սիմոն կրօնաւորն արդեօք վրացերէն բնագրէ թարգմանեց այդ լուծմունքը, զոչ ընդ բնագրին Պրոկղի, թէ ընդհակառակն իրմէ յառաջ յունարէնէ թարգմանուած կային, և կամ յետոյ ուրեմն թարգմանեցան և մուծան ի գրի անդ: Գ. Վերոյ յիշեալ Մեկնութիւնք և Բնագիրքն մի՞նչ նոյն հեղինակի գործ են արդեօք, թէ տարրեր: Դ. Ե՞րբ արդեօք և ի՞նչ պատճառաւ մտան Պրոկղի թարգմանութեան մէջ այդ հաստուածներն: Ե. Սիմոն կրօնաւորն՝ արդեօք թարգմանի՞չ միայն եղած է յիշեալ գործոց, թէ ընդհակառակն խմբագրի դեր ևս կատարած է և


Հ. Բ. Ս.

(Շարայարեղի).



ՀԵԼԼԵՆ ԻՄՍՍԱՍԻՐԱՑ ՀԱՏԸՆՏԻՐ ԽՐԱՏԻՐ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼՔ Ի ՀԱՅ



(Ե. Տեզա Խտայացի հայագիտի ուսումնասիրութիւն)

(Տես յ'էջ 71)



էր անյայտ զուրցուած մ'է նաեւ հետեւեալն. « Կուսիանացիքն լան ըզծնեալսն. և երանեն զվախճանեալսն »: — Ո՞չք էին Կուսիանացիք: Հին ազգաց մէջ թրակացիք համարուած են՝ իբրու ամենէն աւելի տոնցողք աշխարհի կենաց. Արասեանց համար ալ զնոյն կը հաւատարմացնէ Հերոդոտ (Ե. 4. յորմէ և Սեքստոս Եմպիր. և Վալերիոս Մաքսիմոս), և առ Պոմպոնիոսի Մեղայ կը յիշատակուին ժողովուրդք (Բ. 2) որ ժննդական կնոջ քով նստած, արտասուեան և ըզծնեալն կ'ողորմեն. բայց մեզի կարեւորն ըսենք, որ հայերէն հաւաքածոյին խօսքը կը գտնենք առ Ստրէոնի Հերոդոտիայ անունով: Բայց ես կրկին կը հարցընեմ, թէ ո՞չք են Կուսիանացիք: Լըմբեան տպագրին վալերիոսի ծանօթութեանց մէջ ըսուած է թրակացեղաց նորածին մանկանց աշխարհ գալուն վրայ արտասուելու

սովորութիւնն ունէին նաև Կաիսացիք, որ հայկական բնագրին անունաւր մերձաւոր կրնայ համարուիլ: Բայց ի՞նչ ազգ են սոքա, և ո՞ր աշխարհագիր կը յիշատակէ: Այս տարակուսանաց լուծում կամ պատասխան մը գտնելու յոսով՝ աչքէ կ'անցընեմ զՄաքսիմոս և զԱնտոնիոս, և կը գտնեմ որ օգնական ձեռք կը կարկառեն: Εἰς τὸν ἰστορικὸν γυναικῶν. Καυσιανοὶ τοὺς μὲν γεννωμένους θρηνοῦσι, τοὺς δὲ τελευτήσαντας μακάριζουσι (Մաքս. 6.28. Անտ. 103): Այս ընթերցմամբ դիւրին է ուղղել զհայկականն և ընթերցնուլ Կասիացիք:

Καυσαίαι կը գտնենք և Ստեփան Զենոբիոսի Նոյնպիսի իմաստով տողեր կը գտնենք և յԵւրպիլիդ՝ ի Կրեոսիոնոս ողբերգութեան, զորս հայ թարգմանիչն կը փոխէ յարձակ բան (Բ. 7). « Եւրպիլիդէս ասէ. Պարտ է զնոր ծնեալս ողբալ, զի ի չարիս գան. իսկ զվախ

ճանեայսն՝ խնդութեամբ յուղարկել » :

Եւրպիդեայ նկատմամբ՝ արեւելեան այս գրքովը՝ չի ցուցնէր այն մեծարանք զոր կը նկատենք ի հաւաքմանն Ստորէոսի հազիւ չորս անգամ յիշատակուած կը գտնենք զողբերգակ քերթողն . և որովհետեւ հայկական թարգմանութեանց մէջ՝ որ հնութեան յիշատակները կը պահեն , քիչ անգամ կը հանդիպինք մեծ քերթողաց տողերուն , արժան է որ գտածնիս մէջ բերենք : « Եւրպիդէս ասէ . Գաջ դիտեմ զի հարստից և իշխանաց՝ ամեհայն ոք կամի սիրելի լինել . իսկ աղքատն՝ և ի բուն քարեկամէն քակի » . (Գ . 1) :

Ἐπισταμαι δὲ καὶ πεπειραμαι λίαν ὥς τῶν ἐχόντων πάντες ἀνθρώποι φιλοί .

« Եւրպիդէս ասէ . Եւ ոչինչ է բարետոհմութիւն ընչիւք . զի զամենայն վատթարս՝ ինչք մեծացուցանեն , և յառաջինն կացուցին » . (Ժ . 3) .

Ἀλλ' οὐδὲν ἡγήνεαι πρὸς τὰ χρημάτα .

τὸν γὰρ χάκιστον πλοῦτος εἰς πρῶτους ἄγει .

Թերութեան մ'ալ կը հանդիպիմ , որուն սպեղանի գնել հարկ է . « Կուտ թագաւոր Ղակեդեմոնացոցն ասէ ցթրակացիսն որք խրոխտային ի վերայ նորա . Եւ իմ տեսեալ է ուղիս հեղեղաց որոտացեալս , այլ առ սուղ ժամանակս » : (Գ . 17) Ո՛վ ըսեր է արգեօք այս կամ ասոր նման խօսք : Եւ որովհետեւ յայտնի կ'երեւնայ թէ յիշուած անունը աղաւաղութիւն մ'է գրչադրաց , թագաւորաց անուանց մէջ որո՛ւն աւելի կը մօտենայ . — ինչ չերեւար թէ այսպիսի անուն մը ըլլայ . և տառից նկատմամբ եղած խաղը կամ երկխօսութիւնք՝ խաբէականք պիտի համարուէին : Օրինակ մը կամ ճաշակ մը : Մեր դիմաց դրուածն է Կուա . ուրիշ մը թերեւ Կուզ գրած էր՝ փոխանակ Կուզ գրելու , որ մնացորդ մ'է [Լիւկուր]զ , այսինքն [Լիկուր]զոս անուն : Բայց ինչ որ ինծի ծանօթ են [Լիկուր]գոս ընծայուած խօսք կամ գործք , եւրէք այդ խիստ պատասխանը տուած չէ :

Աւելորդ է Լակեդեմոնացոց իշխանաց անունաց ցուցակին մէջ փնտռելու ետեւ ըլլալ . որովհետեւ հայ թարգմանն՝ բառից շարքն տեղափոխելով , աղաւաղեր է զամենայն . ուր հոս խօսքը թրակացոյ մ'է , Կոսիս թագա-

ւորի : Եւ կը ժամանէ մեղ օգնութեան ոչ Ստորէոս , այլ Անտոնիոս ի Մեդա գիւսն . Κότυς δ τῶν Θρακῶν βασιλεὺς, Θηβαίων σεμνυνομένων ὅτι Δακεδαίμονιαν ἡγήσαντο, Ἐγὼ, φησίν, ἐώρακα χεიმάρρους ποταμούς μείλζους τῶν ἀενάων γινομένους, ἀλλ' ὀλίγον Χρόνον .

Նոյն աղբիւրէ , կամ թերեւ աւելի հնազուէ մը , հանուած է Մակեդոնացոյն տա մայրն տուած խրոխտ պատասխանին . « Սմա (Աղեքսանդրի) զծանր հրամանս տայր մայր , իւր Ոլոմպիադ , ասէ . Ո՛վ մայր , դառն իմն տնահարկ ինձամենայ ժամանակի պահաջես յինէն » . (ԺԵ , 4) . Ὁ αὐτὸς θαρὺ τι ἐπιταττοῦσθης αὐτῷ τῆς μητρὸς Ὀλυμπιάδος, ἔφη . Ὡ μῆτερ, πικρόν με ἐνοικίον τῆς ἐνεαμηναίου ἀπαιτεῖς .

Անմիջապէս այս խօսքէն յառաջ , որպէս ի հայն՝ նոյնպէս և ի Մեդա Անտոնիոսի , « Աղեքսանդրոս թագաւոր ի հարցանելն՝ թէ զո՛վ մանուկնք սիրես , գփրկիլպպոս հայր քո թէ զԱրիստոտէլ վարդապետն քո , և ասէ . Չմինն զի կելոյ եղև ինչ պատճառ , զմեան՝ զի բարիք կելոյ » : Բայն ուրիշ պարձուած քով մը՝ նախընտր կը համարէ զվարդապետն ինչպէս կը վկայէ և աւանդութիւնն : Դ Արիստոտէլην, τὸν διδάσκαλον, ἔφη .

Դ

Հոս ուստիւն մը կ'ընեմ : Վենետեկեան հաւաքածոյն՝ այլ և այլ իմաստեց ընծայուած լծիւներէն ետքը կը դնէ այն պատասխաններն զոր Մեկուդոս փրիլոսոփայ տուաւ առ Արիստոնոս (էջք 67—70) : Թերեւ ասկէ ընտրիքն ալ գտնուին . բայց մենք առ այժմ՝ բաւական համարինք այս յոյն կամ լատին բնագրաց համեմատ , զորս կ'ընծայէ Միւլլախ (Հատընտրք յոյն իմաստաս . 516) . և չեմ կրնար ըսել թէ հայ թարգմանութիւնն կարենայ օգնութիւն մը մատուցանել այն նկարագրական հաւաքմանց ամբողջութիւնն մը կազմել ուղղին , որովք կը համարէին հինք թէ իմաստասէր մը ներկայացուցած ըլլայ զաշխարհ և զիրաւ շարժարհի : Ճարտասանական ուստք են՝ պատուաստիւք խառնակուած , և անխաթ պար-

տիգպանի ձեռքով պարտիզէ պարտէզ փռ-
խաղրուած :

Հայկական թարգմանութեան մէջ գտնուած
հարցմունքն, բաղդասեալը ընդ յունին, հե-
տեւեալը են : Ա. Աշխարհ (ճ) : Բ. Աստուած
(Կ) : Գ. Ծով (Ծ) Գ. Եթեր : Ե. Տիւ (Տ) :
Զ. Արեգակն (Ճ) : Է. Լուսին (Ճ) : Ը. Մարդ
(Ր) : Թ. Գեղեցկութիւն (Ճ) : Ժ. Մէր : ԺԱ.
Կին (Դ) : ԺԲ. Մեծութիւն (Թ) : ԺԳ. Աղ-
քատութիւն (Վ) : ԺԴ. Նաւաւար (Վ) : ԺԵ.
Նաւ (Վ) : ԺԶ. Միայնակեցութիւն : ԺԷ.
Մշակ (Վ) : ԺԸ. Քուն (Վ) : ԺԹ. Ծե-
լութիւն (Վ) : Ի. Մահ (Վ) :

Յոյն աւելի ունի Բարեկամ (Ա) և Երկիր
(Է) : Մեր ցուցակէն կ'երևնայ թէ ո՛րչափ
աւելի ունի հայ օրինակն քան ղոյնն :

Այս մասին ալ ճաշակ մը բնծայենք . և
ահաւաստիկ ի հայէն հաւատարմութեամբ քա-
ղուած հետեւեալ խօսքերը .

« Զի՛նչ է արեգակն : Ակն երկնաւոր (օւ-
րանոս օφθαλμός), նահատակ գիշերոյ (νυκ-
τός ανιαγωνιστής), շրջանակ երկնաւոր (αἰθέ-
ριον κύκλωμα), աշխարհի յանդիմանիչ (κοσ-
μικός ἔλεγχος), անմաշ բոց (ἀκτινωτός φλόξ),
զգեստ պտղոց (χαρπῶν περιδόλαιον), անանց
ճառաղայթ (ἄσθεστος ἀκτίς), անպակաս պալ-
ծառութիւն (ἀδιάλειπτον φέγγος), զտեալ
զամպար (. . . λαμπάς), երկնային ճանա-
պարհորդ :

Թ. « Զի՛նչ է կին : Ան միւթարու-
թիւն (ἀνδρος...), ընտանի գազան (συνο-
τιώμενον θηρίον), որոց պատճառք, ի՞՞մ գգեա-
տիւ պատեալ (ἱματισμένη ἔχιδνα) . Ինքնա-
յօծար ի կոխ, հանապազորեան փնտ ի տանն,
ձմեռն անժոյժ, առն ընկմունք (ἀνδρὸς να-
υάγιον), աշխարհի կործանումն, սուր որ ոչ
սայ զգալ, կռիւ բազմադիմի (γῆ. πολυτελής
πολέμος, զոր հայն կ'ենթադրէ կամ կ'ըն-
թեանա... πολίμορος), կենդանի շար (ζῶον
πονθηρόν), աստու ի ծնունդս մարդկան
(ἀνθρῶποποιον ὑπούργημα), պարաւանդ ա-
նեւեալ » :

Յունականէն առնլով՝ մասնաւոր զրչագրի
մը չեմ կապուիր, այլ՝ այլ և այլ ընթեր-
ցուածոց որոց կը հանդիպիմ, և ինչպէս որ
զիմացս կը գնէ Միւլաւս . Հիմա կը մնայ ինձ

տալ զթարգմանութիւն յունականին մէջ պա-
կաս քանի մը հարցուածոց մէկուն :

« Զի՛նչ է սէր : Խնդիր բարեաց, մարտ
անեւեալութ, վարանելոց միւթարութիւն, թի-
կունք թշուառականաց, ինչ մի՛ որ ամենեւ-
ցուն պիտոյ է և ոչ է ի միջի » :

Ե

Հայկական մատենագիտութեան (Վենե-
տիկ, 1883) յ'էջ 133 : տեղեկութիւն տը-
րուած է Գիրք վայելուչ և հարկաւոր կո-
չուած հատորիկի մը, ապագրելոյ ի Մար-
տէլ ի 1675, որ դժուարագիւտ դարձած
զիրք մ'է, և ուրախ եմ օրինակ մը ձեռք
ձգած ըլլալու : Հաւաքողն եղած է Երեւա-
նեցի Ոսկան վարդապետ, որ իրեններուն
մէջ յարգը կորուսած է հայ լեզուի աղաւա-
ղիչներէն մէկը սեպուելուն : Ի՞նչ ծաղկունք
հաւաքեց : Ուրիշ նիւթերէ զատ՝ նաև Ասա-
ցաւօք խոհեմականք հինոց իմաստասիրաց խո-
րագիրը կրող հաւաքում մը՝ որ պիտի նմանէր
վենետականին, ինչպէս յիշատի կը նմանի ալ :

Ինչո՞ւ Սրբոյն Ղազարու հարց տեղեկու-
թիւն մը չեն բնծայեր այս տպագրութեան
վրայ : Արեւի բան մը չմտածանել իրենց
հաւաքման մէջ, բնական էր այդ . պղտոր
ջուրէ մը չեն ուզած ծարաւը յագեցնել,
յստակ և ընտիր աղբերաց առատութիւն ու-
նենալով իրենց մատենադարանին մէջ . և խո-
հական Հայք չեն կրնար զարմանքով տեսնել
յանդուգն ձեռքեր որ նախնեաց գրուածները
կը համարձակին քերել քերթել՝ մաքրելու
մտքով, և անոնց նոր կերպարանք մը տալ . .

Մարտէլիի տպագիրն քաննելոց ղլխակար-
գութիւն ունի, որոց խորագիրը կը դնեմ՝
կարգելով ի հանդիպոյ 53ին հրատարակու-
թեան բաղդատական թուանիշներն : Սակա-
ւոց կը պակասի : Ա. (էջ 74) . Միտք եւ
հանձար (= Ա) : Բ. (76) Արիւտքիւն և
քաղաքիւն (= Ա) : Գ. (78) Բարեկամք և
սիրելիք (= Գ) : Դ. (83) Իշխանութիւն
(= Դ) : Ե. (86) Երդումն (= ԻԱ) : Զ
(87) Խորհուրդ և իմաստութիւն (= ԺԹ) :
Բ. Է. (92) Բաղդ և անբաղդութիւն (= ԺԲ) :
Ը. (94) Մեղք և խոստովանութիւն

(= ԻԲ) : Թ (95) ԲԺԺԿՔ (= Ի) : Ժ (96) Դատաստան : ԺԱ (97) Յաղագս օրիւնաց (= ԺԷ) : ԺԲ (98) Անաստուրիան (= ԺԸ) : ԺԳ (99) Նախախնամութիւն (ԻԳ) : ԺԴ (100) Յաղագս պահպանութեան ընկից (= Զ) : ԺԵ (103) Սէր ընկից և աղքատութիւն (= Է) : ԺԶ (106) Արքեցոյութիւն (= ԺԳ) : ԺԷ (108) Պատիւ ծընողաց (= ԺԸ) : ԺԸ (109) Բամբասանք (= ԺԹ) (110) Քաջագոյութիւն և վատագոյութիւն (= Ժ) : Ի (112) Լոռութիւն (=

ԺԱ) : ԻԱ (115) Դատաստան : ԻԲ (165) Փառք (= Ը) : ԻԳ (117) Մահ (= Թ) : ԻԴ (120) Կիւն (= ԻԴ) : ԻԵ (122) Պարկեշտ կանայք : ԻԶ (123) Բարեխառնութիւն : Համրանքի առնելով, 203 վճռական խօսք կը գտնենք. բայց որովհետեւ վնասական տպագրին մէջ բաժնուած ու առանց անուան հեղինակի, միացած են յոսկանեանն, ու իմաստաւորաց մէկուն ընծայուած, ճիշտ թիւը գտնելու համար՝ քիչ մը աշխատանք հարկաւոր է, զոր վեռ չեմ՝ ըրած ¹ :



ԳԵՂԱՐՈՒԵՍՔ

ԵՆՐԻԿՈՅ ԲԱՐԲԵՐԻ (BARBERI) ԲՈԼՈՆԻԱՅԻ ԻՏԱԼ ՔԱՆԿԱԿՈՐԾ



Այս նշանաւոր քանդակագործին վրայօք՝ իր համագրին Թովմաս Տոգզի՝ այսպէս գրեւ.

Ինչ ի զուր կը թուի ժխտել՝ թէ փամանակէ մ'ի վեր արուեստի քըննուծիւնն շարունակ յետ կ'երթայ և կ'անկանի իւր բարձրութենէն : Պատահաւոր յայտնի է. այսօրուան օրս հրապարակի վրայ կը գեռան այնպիսի գրիչք, որ քանի մի տողով թուղթը մորտեղ գիտնալով, իրաւունք ստացած կը համարին թէ կարող են որ է գործ դատել և վճիռ հատանել՝ նկաւրի մի կամ արձանի մասին, գուցէ հաւանօրէն առանց իսկ գիտնալով՝ թէ յորում կը կայանայ նկարչութեան կամ քանդակի ազատ ու գեղեցիկ արուեստն : Դարձեալ այս անկամանս իբր երկրորդ պատճառ մ'այլ են՝ այն կեղծ ու չահախնդիր անձինք, որ տակաւ սկսան ամէն տեղ յերեւան ելնել՝ հռչակելու միայն այն անձանց

գործերը, որոց համբաւն իրենց այլ չահաբեր լինելով՝ ի հարկէ կարեւոր կը դատին զանոնք ինկել : մանաւանդ թէ, յաճախ այս նպատակաւ իրենց խորձանաց ու զրախօսութեան նիւթ ընել՝ նաեւ այն հմուտ և համեստ անձանց գործերն, որք ամփոփուած իրենց գործին կը զբաղին մտադիր, առանց ամենեւին խորհելու շողորթ մոնետիկ մ'որոսալ :

Այս վերջնոց ազնուական դասուն

¹ Հեղինակը երկու տպագրին մէջ գտնուած տարբերութիւններն ու քննարկին պղտլութիւնները նշանակելով, իրաւացի փափագ մը կը յայտնէ որ զբաղաւորաց ամենուն ըսողաբանութեամբ նոր հաւաքմունք մը պատրաստուի ու տպագրութեամբ հրատարակուի : Ազնիւ նպագներն այս փափագը կը շանակը մտաւոր գործագրել :